



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 8

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2017 Թ. ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. Ամփոփիչ ավարտական քննությունների և ավարտական աշխատանքների նախապատրաստական գործընթացները ամփոփումներում:
2. Հայոց լեզվի ամփոփի տարեկան հաշվետվությունը:
3. Տեղեկատվություն օտարերկրյա գործուղումների նոր կարգի մասին:
4. «Չարենցյան ընթերցումներ» 10-րդ հոբելյանական գիտական նստաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը հայ նորագույն գրականության ամփոփում:
5. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտխորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը իր խոսքի սկզբում տեղեկացրեց, որ գիտխորհրդի 29 անդամներից նիստին մասնակցում է 23-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ծանոթացրեց օրակարգի հարցերին, որոնց քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

1-ին հարցի առիթով պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց ֆակուլտետի ամփոփումների վարիչներին: Հաջորդաբար ելույթ ունենալով՝ նրանք բոլորը նկատեցին, որ ամփոփիչ ավար-

տական քննությունների և ավարտական աշխատանքների նախապատրաստական գործընթացները ամբիոններում ընթանում են բնական հունով. լավ են աշխատում թե՛ գիտական ղեկավարները և թե՛ ուսանողները: Առայժմ չեն արձանագրվել անցանկալի դեպքեր:

Օրակարգի 2-րդ՝ հայոց լեզվի ամբիոնի տարեկան հաշվետվության առիթով էլույթ ունեցավ ամբիոնի վարիչ Բ. Գ. Դ., պրոֆ. Յուրա Ավետիսյանը:

ՅՈՒՐԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ.

- Գիտական հետաքրքրությունները բազմազան են, բայց շատ որոշակի՝ արդի հայերենի կանոնարկման հարցեր, արևելահայերենի և արևմտահայերենի առնչություններ, թարգմանչական գործ, հաղորդակցման և խոսքի մշակույթի արդիական հիմնախնդիրներ են:

Այս ուսումնական տարում ամբիոնը հրատարակել է տասնհինգ գիրք, որոնցից երկուսը հայոց լեզվի պատմության ամբիոնի և Համազգային հայ կրթական և մշակութային միության հետ համատեղ: Վերջին երկու ամսում հրատարակվածներից են Հակոբ Չոլաքյանի «Գրական արևմտահայերենի ուսումնասիրության պատմություն» աշխատասիրությունը և Փառանձեմ Մեյթիխանյանի «Աստվածաշնչի հատկանվանաբանություն» մենագրությունը:

Ամբիոնի երկու հայցորդներ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ:

Պաշտպանության է երաշխավորվել Փ. Մեյթիխանյանի դոկտորական ատենախոսությունը:

Ամբիոնի դասախոսները մասնակցել են համալսարանական և հանրապետական գիտաժողովների, տպագրել են **երեք տասնյակից ավելի** գիտական հոդված:

Դուբայի Ազգային Օհաննեսյան միօրյա վարժարանում Հայերենի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին բանախոսությամբ հանդես է եկել **Հակոբ Չոլաքյանը:**

Ամբիոնի ջանքերով և Կառավարության հրամանով՝ վերակազմավորվել է Հայերենի բարձրագույն խորհուրդը՝ հատուկ կարգավիճակով՝ ՀՀ վարչապետին առընթեր (նախագահ՝ Յու. Ավետիսյան):

Ամբիոնի նախաձեռնությամբ սույն թվականից գործարկվում է նոր մասնագիտացում՝ «Թարգմանչական գործ»:

Ամբիոնն ունի առկա ուսուցման մեկ և հեռակա ուսուցման երեք ասպիրանտ:

Պարբերաբար թարմացվում և արդիականացվում են մագիստրոսական ծրագրերը, մասնավորապես ավելացվել են թարգմանչական գործին վերաբերող դասընթացները, որոնք դասավանդում են նաև հրավիրված դասախոսներ:

Ամբիոնը երեք տարի շարունակ ապահովում է մագիստրոսական ծրագրի իրականացման համար նախատեսված ուսանողների անհրաժեշտ քանակը:

Հայոց լեզվի ամբիոնը ներկայումս էլ շարունակում է գիտակրթական իր արդյունավոր գործունեությունը: 2017 թ. տպագրության են երաշխավորվել մեկ բառարան (հեղ.՝ Ջ. Ա. դաշանյան) և բուհական մեկ դասագիրք՝ պրոֆ. Ա. Սուքիասյանի դասագրքի լրամշակված տարբերակը (համահեղինակներ՝ Քնարիկ Սուքիասյան, Մանուկ Ֆելեքյան): Համահեղինակությամբ (հեղ.՝ Յու. Ավետիսյան, Լ. Սարգսյան) կազմվել է «Ուղեցույց հայոց լեզվի հնչյունաբանության, բառագիտության, քերականության», որում ընտրողաբար զետեղված են հայերենի գրեթե բոլոր ոլորտներին վերաբերող գործնական նյութեր՝ ուղղախոսությունից մինչև շարահյուսական կառույցներ: Գիրքը քննարկման փուլում է և շուտով կներկայացվի տպագրության:

Ընթացիկ տարվա հոկտեմբերի 17-ին ամբիոնը կազմակերպելու է հանրապետական գիտաժողով՝ նվիրված լեզվաբան Աշոտ Սուքիասյանի 95-ամյակին:

Օրակարգի 3-րդ՝ օտարերկրյա գործուղումների նոր կարգի մասին տեղեկատվությամբ հանդես եկավ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ավագյանը: Նա խորհրդի անդամներին ծանոթացրեց վերոնշյալ կարգին և բոլոր ամբիոնների վարիչներին հանձնարարեց խստորեն հետևել դրա իրականացմանը:

«Չարենցյան ընթերցումներ» 10-րդ հոբելյանական գիտական նստաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը հայ նորագույն գրականության ամբիոնում հարցը **օրակարգում 4-րդն** էր: Ամբիոնի վարիչ դոց. Ս. Գրիգորյանը մասնավորապես նկատեց, որ արդեն պատրաստվում են զանազան զեկուցումներ, աշխատանքներին կմասնակցեն նաև այլ ամբիոնների և հանրապետության գիտակրթական հաստատությունների գիտնականներ:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

ա/ **Լ Ս Ե Ց Ի Ն** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հայցորդ **Տաթևիկ Հայկի Մերջանյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ., պրոֆ. Ս. Մուրադյանը, Վ. Գաբրիելյանը, Ժ. Քալանթարյանը և Ալ. Մակարյանը:

Ելույթ ունեցողները նկատեցին, որ հայ արձակի նշանավոր վարպետներից մեկը՝ Նար-Դոսը, իր երկերում հաճախ է անդրադարձել կյանքի ու մահվան հիմնախնդրին, որը գրականագիտության մեջ մինչ օրս չի դարձել հատուկ ուսումնասիրության նյութ: Հիմնախնդիրը, ինչ խոսք, այսօր էլ խիստ արդիական է և կարոտ համապարփակ քննության, ուստի նպատակահարմար է այն հանձնարարել հայցորդին՝ իբրև թեկնածուական ատենախոսության թեմա:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - 1. Հաստատել ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հայցորդ **Տաթևիկ Հայկի Մերջանյանի** թեկնածուական ատենախոսության թեման՝ «**Կյանքի և մահվան խնդիրը Նար-Դոսի երկերում**»՝ Ժ. 01.01 - «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ:

2. Գիտական ղեկավար հաստատել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Արշավիրի Մակարյանին:

բ/ **Լ Ս Ե Ց Ի Ն** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հայցորդ **Աննա Պետրոսի Թորոսյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ., պրոֆ. Ս. Մուրադյանը, Վ. Գաբրիելյանը, Ժ. Քալանթարյանը և Ալ. Մակարյանը:

Ելույթ ունեցողները նկատեցին, որ հայ դասական գրողներից մեկի՝ Ղազարոս Աղայանի գեղարվեստական արձակը մինչ օրս չի դարձել հատուկ ուսումնասիրության նյութ, ուստի նպատակահարմար է հայցորդին հանձնարարել այդ հիմնախնդրի քննությունը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - 1. Հաստատել ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հայցորդ **Աննա Պետրոսի Թորոսյանի** թեկնածուական ատենա-

խոսության թեման՝ «Ղազարոս Աղայանի գեղարվեստական արձակը»՝ Ժ 01.01 - «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ:

2. Գիտական ղեկավար հաստատել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Արշավիրի Մակարյանին:

զ/ **Լ Ս Ե Ց Ի Ն** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու **Նվարդ Խաչատուրի Վարդանյանին** դոցենտի գիտական կոչման գործընթացին մասնակցելու երաշխավորության հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Ս. Մուրադյանը և Ալ. Մակարյանը:

Նշվեց, որ ասիստենտ Նվարդ Վարդանյանը 2006թ. պաշտպանել է թեկնածուականատենախոսություն՝ «Հայոց իրապատում հեքիաթի ժանրային-տիպաբանական համակարգը» թեմայով: 2006 թվականից աշխատում է հայ գրականության պատմության ամբիոնում՝ որպես ասիստենտ: Նրա գիտական և մանկավարժական գործունեությունը արդյունավետ է. ծանոթ է բանագիտության վերջին խոսքին, եռանդով մասնակցում է տեղական և միջազգային գիտաժողովներին: «Երիտասարդ գիտնականների մրցանակաբաշխություն 2013» մրցույթում ճանաչվել է «Լեզվաբանություն և գրականագիտություն» բնագավառի՝ Հր. Ա. ճառյանի անվան երկրորդ մրցանակի դափնեկիր:

Նվարդ Վարդանյանը տպագրել է «Հայոց իրապատում հեքիաթը. ժանրային-տիպաբանական քննություն» մենագրությունը, համահեղինակ է «Հայ ժողովրդական և գրական հեքիաթի արդի հիմնախնդիրները» կոլեկտիվ մենագրության (հայերենով և անգլերենով), հրատարակել է «Ժողովրդական հեքիաթի դասավանդման մեթոդիկական բուհում» ուսումնամեթոդական հոդվածն ու ևս գիտական 17 հոդվածներ, ունի գիտաժողովների զեկուցումների հրատարակված 9 թեզիս:

«Դասախոսն ուսանողի աչքերով» սոց.հարցման արդյունքը 4.73 միավոր է:

Ներկայացված փաստաթղթերը հիմք են տալիս Նվարդ Վարդանյանին երաշխավորել մասնակցելու ՀՀ ԲՈՂ-ի՝ դոցենտի գիտական կոչման համար սահմանված գործընթացին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - 1. Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու **Նվարդ Խաչատուրի Վարդանյանին** երաշխավորել մասնակցելու **դոցենտի կոչում** շնորհելու գործընթացին:

2. Դիմել ԵՊՀ-ի ռեկտորատին՝ հաստատելու հայ բանասիրության ֆակուլտետի գիտ-խորհրդի որոշումը:

Վերջում պրոֆ. Ա. Ավագյանը, ամփոփելով գիտական խորհրդի նիստը, շնորհակալություն հայտնեց մասնակիցներին, և նիստը հայտարարվեց ավարտված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ